ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/140

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ա. Մարգարյանի (լիազորագիր՝ տրված 27.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8513-2021 գրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.05.2021թ. թիվ 1/18-2/30686-2021 գրության հիման վրա 27.05.2021թ. թիվ 26/26-1/8513-2021 գրությամբ նախաձեռնել է «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ նախաձեռնված ընթացակարգը իրավաչափ չէ, քանի որ տվյալ գործընթացի ընթացքում առկա են օրենքի և կարգի հետևյալ խախտումները.

1. Պատվիրատուի կողմից 11.05.2021թ.-ին թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, սակայն համապատասխան գրությունը անհամապատասխանությունները շտկելու ուղարկվել է ոչ թե Կարգով սահմանված ժամկետում, այլ միայն 12.05.2021թ.-ին տեղադրվել է համակարգում, որտեղից և Ընկերությունը տեղեկացել է առկա անհամապատասխանությունների մասին: Ավելին Ընկերության էլեկտրոնային հասցեին հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում շտկման վերաբերյալ չի ուղարկվել: Այսպիսով, հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթի խախտում:

2. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ընթացակարգի ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է սույն թվականի ապրիլի 23-ին հայերեն և ռուսերեն լեզուներով: Սակայն նիստերի կայացված արձանագրությունները հրապարակվել են միայն հայերեն լեզվով, մինչդեռ՝ Ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 և 1 հավելվածներից ակնհայտ է, որ ռուսերեն լեզվով է իրականացվում վերջինիս փաստաթղթաշրջանառությունը, ուստի նիստերի կայացված արձանագրությունները միայն հայերեն լեզվով հրապարակելով, Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ, քանի որ արձանագրությունները նաև ռուսերեն պետք է հրապարակվեին, որով իսկ խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը:

3. Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 13-րդ հոդվածը: Եթե նույնիսկ տեսականորեն համարենք, որ Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները խախտվել են, ապա այդ խախտմանը նպաստել է ՊԵԿ- ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով

գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը, այն է ընթացակարգի հրավերի, դրան կից տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին»:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ սույն գործով Ընկերության կողմից գրավոր դիրքորոշում է ներկայացվել 08.06.2021թ.՝, որպիսի պայմաններում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 4-րդ կետով սահմանվում է, որ ***<u>Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում</u>***, գրավոր ***<u>դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին</u>***, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Հիմք ընդունելով վերը նշված կարգավորումը՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից 08.06.2021թ. ներկայացված դիրքորոշմանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման մեջ չի անդրադարձել, այն հիմնավորմամբ, որ նախաձեռնված ընթացակարգը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 02.06.2021թ. և որոշման հրապարակման օր է նշանակվել 08.06.2021թ.-ը, այսինքն՝ Ընկերությունը կարող էր և սահմանափակված չէր որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրը՝ 03.06.2021թ. ներառյալ, ներկայացնելու գրավոր դիրքորոշում, մինչդեռ դիրքորոշումը ներկայացվել է վերը նշված կարգավորմամբ սահմանված ժամկետից ուշ՝ որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի օրը՝ ժամը 01:26-ին:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.05.2021թ. թիվ 1/18-2/30686-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնայի աճուրդին մասնակցելու դիում-հայտարարության (Հավելված 1) 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված էր «Դավիթ Դավթյան» անունը, իսկ մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում նշված չէր անձը հաստատող փաստաթղթի տեսակը,
- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չէ հրավերով սահմանված կարգով լրացված և հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի՝ (այսուհետ՝ կարգի) «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին ծանուցվել էր շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն շտկել էր անհամապատասխանությունները, սակայն վերջինիս կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, և գնահատող հանձնաժողովի կողմից «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016» ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնայի աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված էր «Դավիթ Դավթյան» անունը, իսկ մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում նշված չէր անձը հաստատող փաստաթղթի տեսակը,
- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չէ հրավերով սահմանված կարգով լրացված և հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը auction համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը, այն հիմքով, որ վերջինիս կողմից շտկման արդյունքում ներկայացված հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8513-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.05.2021թ. թիվ 1/18-2/30686-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգով 02.06.2021թ. հրավիրված նիստի ընթացքում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի հայտնած դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին***:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնայի աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված էր «Դավիթ Դավթյան» անունը, իսկ մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում նշված չէր անձը հաստատող փաստաթղթի տեսակը,
- «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չէ հրավերով սահմանված կարգով լրացված և հաստատված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով

կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը auction համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի մայիսի 12-ին «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունները, սակայն վերջինիս ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես.

1. Հրավերով պահանջվող 2 հատ կոմպոզիտային սերվերային համակարգերը ներկայացված առաջարկում բացակայում են,

2. Հրավերով պահանջվող 2 հատ տվյալների պահպանման համակարգերը ներկայացված առաջարկում բացակայում են:

3. «1» և «2» կետերում բացակայող սարքավորումների փոխարեն առաջարկվել է 2 ական միասնական լուծում (server/storage)-ը, որը չի բավարարում հրավերի տեխնիկական բնութագրին, միասնական լուծման ժամանակ հնարավոր չէ առանձնացնել սերվերները տվյալների պահոցից, որը անհրաժեշտություն է պատվիրատուի համար,

4. Հրավերի տեխնիկական բնութագրի 1.2 կետով պահանջվող Brocade Fiber Channel մուդուլները առաջարկում բացակայում են,

5. Հրավերով պահանջվող 6 հատ 2650W էլեկտրական սնուցման բլոկերի փոխարեն առաջարկվել է 8 հատ 2000W էլեկտրական սնուցման բլոկեր,

6. Հրավերով պահանջվող 16 հատ JD092B մոդուլների փոխարեն չի առաջարկ վել կոնկ րետ մոդելի ապրանք որպեսզի հնարավոր լինի ստուգել համատեղելիությունը արդեն իսկ առկա HP FlexFabric 5700 ցանցային կոմուտատորի հետ:

7. Հրավերով պահանջվող 6 հատ QSFP28 Uplink պորտերի փոխարեն' որոնցից ցանկացածը հնարավոր կլինի կոնֆիգուրացնել հետևյալ տարբերակներից

յունրաքանչյուրով՝ 1x100Gb, 4x25Gb, 1x40Gb, 4x10Gb Ethernet, սակայն առաջարկվել է միայն 32x100G 1U AC port Side Intake and PSU Side Exhaust, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

8. Հրավերով պահանջվող 2 Ethernet պորտերով՝ յուրանչյուրը 25/50 Գբիթ/վրկ արագությամնբ 1 կոնվերգենտ քարտի փոխարեն առաջարկվել է Mellanox ConnectX-4 Lx 10/25 GbE SFP28 2-port PCIe Ethernet Adapter, որը չի բավարարում հրավերի պահանջներին,

9. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել միանման 16 օպերատիվ հիշողության մոդուլ, որտեղ մոդուլների ընդհանուր քանակը լուծման մեջ կկազմի առնվազն 24x16=384: Ներկայացված առաջարկում տեղադրված է ընդամենը 312 մոդուլ, ինչը չի բավարարում հրավերի պահանջներին, ինչպես նաև առաջարկվող 1 սերվերի համար օպերատիվ հիշողության մոդուլների քանակը առավելագունը 12 է 16-ի փոխարեն, ինչը պահանջվում է մրցույթի պայմաններով համակարգի հետագա աճեցման հնարավորությունն ապահովվելու համար,

10. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել երկուական 2.5" SSD տիպի կրիչ, որի փոխարեն առաջարկվել M.2 տիպի SSD կրիչներ, որը 2.5" բավարարում հրավերի պահանջներին,

11. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել մեկական քարտ՝ 2 հատ 32Գբ/վ Fibre Channel պորտերով, ինչը ներկայացված առաջարկում առկա չէ, 11:1,

12. Հրավերով պահանջվում էր տվյալների սինխրոն և ասինխրոն ուպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման, սակայն նշվածի վերաբերյալ ոչ մի տեղեկություն կամ առաջարկ ներկայացված չէ,

13. Համաձայն Լենովո ընկերության կայքում տեղադրված տեղեկատվության՝ առաջարկվող Lenovo ThinkAgile HX3721 համակարգի համար հասանելի չեն 7. 68TB և 15. 36TB SSD կրիչներ, ինչը պահանջված է հրավերի տեխնիկական բնութագրով՝ ապահովելու համար համակարգի հետագա աճեցման հնարավորությունները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016» ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, ռուսերեն տարբերակով նախատեսվել է հետևյալ տեսքով.

Անվանում		***Տեխնիկական բնութագիրը***
Серверная система	Тип:	Единая составная система управления фонда вычислений, хранения данных, физических и виртуальных сетевых ресурсов.
	Совместимость:	Системы (1), (2), (3) должны быть производины под одной маркой и быть полностью совместимыми.
	Высота:	Стандартная высота серверной стойки - 10U.
	Количество поддерживаемых серверов:	Как минимум 12 двухпроцессорных серверов.
	Конвергентный модуль	Как минимум 2 сетевых модуля - 6 портов Uplink QSFP28 на каждом сетевом модуле, любой из которых может быть настроен с любым из следующий вариантов: 1x100Gb, 4x25Gb, 1x40Gb, 4x10Gb Ethernet; 1x32Gb/ 1x16Gb Fibre Channel - 12 внутренних каналов downlink на каждом сетевом модуле для подключения к серверам, установленным в системе, с возможностью настройки 50 ГБ или 25 ГБ. - 16 преобразователей JD092B для подключения к существующим сетевым коммутаторам HP FlexFabric 5700
	Модуль Fibre Channel	Как минимум 2 модуля Brocade Fibre Channel - Пропускная способность каждого порта 32 Гбит / с - Общая пропускная способность устройства - 896 Гбит / с - Количество внутренних портов: 12 - Количество внешних портов: не менее 8 SFP +
	Композитное устройство управления	Как минимум 2 составных модуля управления с возможностью автоматической консолидации системных ресурсов, защиты нагрузки в соответствии с приоритетами и способностью перераспределения.
	Питание	6 блоков питания Titanium Plus с мощностью 2650 Вт
	Расширяемость	Возможность администрировать не менее 20 композитных серверных систем типа (1), как одну единую систему.
	Непрерывность	Устойчивость системы к отказу одного компонента в любом пункте из (1.1), (1.2), (1.3), (1.4).
	Составной сервер – 24 шт.	
	Тип	С яозможностью установки в системе пункта (1)
	Совместимость	Системы (1), (2), (3) должны быть производины под одной маркой и быть полностью совместимыми.
	Количество процессоров	Как минимум 2 шт. на каждом сервере
	Настройки процессора	2 шт - 20-ядерные, с частотой 2,1 ГГц, 2933MHz, С поддержкой DDR4
	Производительность процессора	SPEC rate2017 integer result base -223 баллов.
	ОЗУ	Всего 512 ГБ с 16 идентичными модулями DDR4-2933 Dual Rank
	Базовая память	SSD накопители 2,5", 480 ГБ - 2 шт.
	Сеть Ethernet	1 конвергентная карта с 2 портами Ethernet, каждый 25/50 Гбит/с
	Fibre Channel ցանց	1 карта с 2 портами Fibre Channel, каждый 32 Гбит/с

	Система хранения данных – 2 шт.	
	Совместимость:	Системы (1), (2), (3) должны быть производины под одной маркой и быть полностью совместимыми.
	Описание контроллеров	- Минимум 4 активных контроллера с возможностью горячей замены - 1 TiB кеш-память, 256 GiB на каждом контроллере - Минимум 32 портов Fibre Channel - 32 Гбит / с - Минимум 2 отдельных портов Ethernet 10 Гбит на каждом контроллере для аппаратной репликации данных - минимум 4 порта SAS 12Gb на каждом контроллере для подключения дисковых стоек
	Вставленные диски	48x1,92 ТБ SSD SAS 2,5" диски
	Возможность увеличения системы	- Возможность установки как минимум 26 SSD накопителей NVMe - Возможность установки как минимум 384 SSD дисков - Возможность установки как минимум 576 HDD дисков - Поддержка дисков 1,92, 3,84, 7,68, 15,36 ТБ SSD 2,5"
	Функциональность системы	- Создавать мгновенных копий (snapshots) - Создавать полных копий (snapshots) - Программное обеспечение для управления системы - Программное обеспечение для анализа скорости системы - Возможность работы с узкими частями (Thin Provisioning) - Возможность разрделения системы на логические части - Возможность создания мгновенных копий для программных пакетов Oracle, Microsoft Exchange, Microsoft SQL, VMware vSphere, Microsoft Hyper-V. - Возможность интеграции с VMware vCenter - Дедупликация и сжатие данных
	Репликация данных	- Синхронноая и асинхронная репликация данных с другой системой той же модели, без дополнительных устройств и программного обеспечения - Синхронная и асинхронная репликация данных с текущей системой HPE 3PAR 8400 без дополнительных устройств и программного обеспечения
	Системное администрирование	Система должна иметь функцию "call home", которая позволяет: - Автоматическая регистрация заявки на обслуживание в сервисной системе производителя, в случае системных проблем. - Автоматическое предоставление списка доступных рекомендуемых обновлений, с учетом микрокодов и программных пакетов, доступных заказчику (version). - Оценка производительности системы во время чтения / записи по 10-балльной шкале.
	Основная информация	
	Кабели и конвертеры	Системы (1), (2), (3) должны включать кабели и конвертеры, необходимые для соединения всех вышеперечисленных компонентов. Подключение и совместное использование компонентов должны быть официально одобрены всеми производителями компонентов.
	Гарантия	Для систем (1), (2), (3) производитель должен предоставить 5-летнюю заводскую гарантию на территории Республики Армения, с возможностью регистрации заявки на обслуживание в системе производителя в режиме 24x7 (обратная связь: максимум 4 часа). Поврежденные носители не будут возвращены поставщику или производителю после замены, что должно быть указано в описании гарантии производителя.
	Услуги по установке	Доставка должна включать услугу запуска системы в соответствии с архитектурой, рекомендованной производителем. Работу должен будет выполнять специалист, сертифицированный производителем.

- ***Требуемые товары должны быть серийного производства.***
- ***Транспортировка и разгрузка товаров осуществляется поставщиком за свой счет и средства.***
- ***Для требуемых товаров Поставщик должен представить доверенность производителя (MAF) или официальную доверенность поставщика (DAF).***
- ***Процесс закупок организуется в соответствии пункта 6 статьи 15 Закона РА “О Закупках”.***

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն որպես անհամապատասխանության շտկում ներկայացրել է հետևյալ տեսքով Հավելված N 1.1՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ապրանքային նշանը	ֆիրմային անվանումը	մակնիշ	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	Lenovo / Juniper	Lenovo Group Limited , Juniper Networks, Inc.	Lenovo ThinkAgile HX3721 Certified Node, Lenovo ThinkAgile Enclosure for HX Certified, QFX5120-32C-AFO	Lenovo Group Limited , Juniper Networks, Inc.	26 комплектов серверов/сторадж- Node : Lenovo ThinkAgile HX3721 Certified Node 5YR 26 штук With Enclosure 26 штук ThinkAgile HX372x Refresh Base 26 штук XClarity Pro 26 штук Intel Xeon Gold 6238 22C 140W 2.1GHz Processor 52 штук ThinkSystem 64GB TruDDR4 2933MHz (2Rx4 1.2V) RDIMM 312 штук Nutanix Flash Node Config 26 штук ThinkSystem 2.5" Intel S4610 1.92TB Mainstream Hot Swap SSD 104 штук ThinkSystem M.2 with Mirroring Enablement Kit 26 штук ThinkSystem M.2 5300 480GB Non-Hot Swap SSD 52 штук Mellanox ConnectX-4 Lx 10/25GbE SFP28 2-port PCIe Ethernet Adapter 52 штук Enable TPM 2.0 26 штук ThinkSystem SD530 3x2 SAS/SATA BP 26 штук ThinkSystem SD530 430-8i SAS/SATA 12Gb Dense HBA Kit 26 штук ThinkSystem 1x1 2.5" HDD Filler 52 штук ThinkSystem SD530 SAS x6 Service Label LI 26 штук Companion Part for XClarity Controller Standard to Enterprise Upgrade in Factory 26 штук ThinkSystem 4R CPU HS Clip 52 штук ThinkSystem SD530 85mm CPU2 Heatsink 52 штук ThinkAgile 2U4N HX Certified Node Agency Label 26 штук Enable IPMI-over-LAN 26 штук HX First Power-On Label 26 штук System Document 26 штук ThinkSystem XClarity Controller Standard to Enterprise Upgrade 26 штук Feature Enable TPM on MB 26 штук Node Cores 1144 штук Node Tebibytes 182 штук 2U Bracket for Mellanox ConnectX-4 Lx 2x25GbE SFP28 Adapter 52 штук HX Series 2U4N Lenovo Label Kit 26 штук ThinkSystem SD530 SW GBM 26 штук Intel Inside Xeon Label 26 штук NTNX HW Certified Node 26 штук Nutanix Solution Code MFG Instruction 26 штук XClarity Pro, Per Endpoint w/5 Yr SW S&S 26 штук Lenovo XClarity Pro, Per Managed Endpoint w/5 Yr SW S&S 26 штук Nutanix Core_Flash Software 26 штук

					Nutanix Ultimate License 26 штук **Nutanix Ultimate 5Yr Maintenance and Support 26 штук** **Chassis : Lenovo ThinkAgile Enclosure for HX Certified Node 5YR 8 штук** **ThinkAgile HX Series Enclosure 8 штук** **ThinkSystem D2 8-slot x8 Shuttle ASM 8 штук** **ThinkSystem D2 10Gb 8 port EIOM SFP+ 8 штук** **ThinkSystem Single Ethernet Port SMM 8 штук** **ThinkSystem D2 2000W Platinum PSU 16 штук** **2.8m, 13A/100-250V, C13 to C14 Jumper Cord 16 штук** **ThinkSystem D2 Slide Rail 8 штук** **ThinkSystem D2 CMA (Cable Management Arm) 8 штук** **System Document 8 штук** **ThinkAgile 2U4N HX Certified Chassis Agency Label 8 штук** **NTNX HW Certified Node 8 штук** **HX 2U4N Chassis Badge 8 штук** **HX Chassis Service Label LI 8 штук** **Lenovo ThinkSystem Warning Label, Power 2000W – Platinum 8 штук** **ThinkSystem D2 Chassis Package 8 штук** **Nutanix Solution Code MFG Instruction 8 штук** **Professional ServiceUnit - ThinkAgile HX Deployment - Base 8 штук** **32x100G 1U AC port Side Intake and PSU Side Exhaust 4 штук** **QSFP28 to SFP+ 25 Gigabit Ethernet Direct Attach Break out Copper (twinax copper cable) 5m 26 штук** **QSFP28 to QSFP28 Ethernet Direct Attach Copper (twinax copper cable) 1m 4 штук** **Juniper Care Core Plus Support for QFX5120-32C-AFO,QFX5120-32C-AFI,QFX5120-32C-DC-AFO,QFX5120-32C-DC-AFI 4 штук** **5 Yr Advanced2 license for Class 2 products (QFX5200-32C-L, QFX5120-32C) 4 штук** **QSFP+ 4x10GBASE SR Ethernet module 16 штук**
					Системы (1), (2), (3) включает кабели и конвертеры, необходимые для соединения всех вышеперечисленных компонентов. *Подключение и совместное использование компонентов официально одобрены всеми производителями компонентов.* *Для систем (1), (2), (3) предоставленно 5-летная заводская гарантия на территории Республики Армения, с возможностью регистрации заявки на обслуживание в системе производителя в режиме 24x7 (обратная связь: максимум 4 часа).* *Поврежденные носители не будут возвращены поставщику или производителю после замены, это быдет указано в описании гарантии производителя.*

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված Հավելված N 1-ը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը և Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն ներկայացված փաստաթղթում՝ Հավելված N 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության՝ արձանագրվել են 13 կետից բաղկացած անհամապատասխանություններ:

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ, հանգեցրել են Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման

ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2021/140 ընթացակարգով 02.06.2021թ. հրավիրված նիստի ընթացքում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացուցչի հայտնած հետևյալ դիրքորոշմանը. «*Պատվիրատուի կողմից 11.05.2021թ.-ին թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, սակայն համապատասխան գրությունը անհամապատասխանությունները շտկելու ուղարկվել է ոչ թե Կարգով սահմանված ժամկետում, այլ միայն 12.05.2021թ.-ին տեղադրվել է համակարգում, որտեղից և Ընկերությունը տեղեկացել է առկա անհամապատասխանությունների մասին: Ավելին Ընկերության էլեկտրոնային հասցեին նույն օրը հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում շտկման վերաբերյալ չի ուղարկվել: Այսպիսով, հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթի խախտում*», ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ գործում առկա փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից Կարգի 41-րդ կետի հիմքով իրականացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված շտկումները և ներկայացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որը գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել և գնահատվել է, հետևաբար գտնում եմ, որ Ընկերության կողմից բարձրաձայնված փաստը քննության

առարկա դարձնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ վկայակոչվածը որևէ խոչընդոտ չի հանդիսացել և վերջինիս չի զրկվել կարգով իրեն վերապահված իրավունքն իրացնելու, այն է՝ անհամապատասխանությունները շտկելու հնարավորությունից:

Անդրադառնալով Ընկերության կողմից հայտնած հետևյալ դիտարկմանը. «*Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 13-րդ հոդվածը: Եթե նույնիսկ տեսականորեն համարենք, որ Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները խախտվել են, ապա այդ խախտմանը նպաստել է ՊԵԿ- ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը, այն է ընթացակարգի հրավերի, դրան կից տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին*», ապա սույն մասով արձանագրում եմ, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ոչ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ոչ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, իսկ վիճարկվող փաստը բարձրաձայնվել է հայտերը բացվելուց հետո, երբ Ընկերության հայտը մերժվել է, ուստի Ընկերության դիտարկումը սույն մասով չի կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ այն ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետից հետո:

Անդրադառնալով Ընկերության կողմից հայտնած հետևյալ դիտարկմանը. «*ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ընթացակարգի ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է սույն թվականի ապրիլի 23-ին հայերեն և ռուսերեն լեզուներով: Սակայն նիստերի կայացված արձանագրությունները հրապարակվել են միայն հայերեն լեզվով, մինչդեռ՝ Ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 և 1 հավելվածներից ակնհայտ է, որ ռուսերեն լեզվով է իրականացվում վերջինիս փաստաթղթաշրջանառությունը, ուստի <u>նիստերի կայացված արձանագրությունները միայն հայերեն լեզվով հրապարակելով, Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ, քանի որ արձանագրությունները նաև ռուսերեն պետք է հրապարակվեին, որով իսկ խախտվել</u>*

է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը», ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ռուսերեն տարբերակով տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) չհրապարակելու փաստը, տվյալ դեպքում որևէ խոչընդոտ չի հանդիսացել Ընկերության համար, քանի որ ինչպես արդեն նշվեց Ընկերությունն Ընթացակարգի շրջանակներում սահմանված ժամկետում իրացրել է իր շտկման հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2021թ. թիվ 26/26-1/8513-2021 գրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**